

ՄԱՅՐՈՒԹԻՒՆԸ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՆ ՄԵՋ

Երբ մտածումս, մարդ իւր առջեւ կը բերէ մայրենի անձնաւորութիւնն, երբ մարդ կ'աշխատանէ լոկ մայր բառը, յանկարծակի՝ բարութեանց եւ անձնութեան թեանց յիշատակներն որք այդ բառին կը հետեւին իբր յուղարկաւոր, այնպիսի ակնածանք կը թափանցեն սիրտն՝ որ նախ տարակուսելի կը լինի թէ դեռ եւս կարէ՞ մնալ մօր համար պահանջելու ո՞ր եւ է օրինաւոր իրաւունքը։ Անոր ազատութեան վրայ խօսիլ, կարծես հասարակաց խիղճը զրպարտել է։ Նայինք արդարեւ մեր բոլորութեան վրէժնք ամենէն թերահաւատ սերունդներու մէջ, եւ անդ ահա պիտի գտնենք տեսակ մը դաւանանք այդ մայրական տիրուղոյն վերաբերմամբ։ Ըսէ՞ք սա սկեպտիկեան երկամասարդին՝ ոյր բոլոր աւելնը կ'ըստպառն կանանց առաքինութեան դէմ երգիծական ոտանաւորներ յերկրելով՝ եւ ինքն իսկ կը ծիծաղի այդ առաքինութեան վրայ իբր մտացածին ինչ։ Ըսէ՞ք իրեն թէ իւր մայրն օր մը տկար գտնուած է առայն, եւ ահա սրտմտութեան վեր կը ցատէ, սուտ կը հանէ ձեր ըսածն եւ թերեւս զձեզ մենամարտի ալ հրաւիրէ։ Բոլոր մաքուր զգացումները կը զարթոնան ի նմա։ Ո՞ր մարդը, ո՞րքան ալ տմարդի երեւի մեր աչաց, մեծարանք մի կողմ չը բաշտիր ճամբայ բանալու համար յղի կնոջ մը։ Ետ ժողովուրդներ կը ներեն այն յղի կնոջ՝ որ իւր մանկիկը սնուցանելու համար գողութիւն կ'ընէ։ Եւ մայրութիւնը մինչեւ իսկ մերկութեան կուտայ ա՛յնպիսի անբծութիւն մը՝ որ իւր նորածինը զիեցնող մանկամարդ եւ գեղանի մօր մը մերկ կուրծքը պարկեշտ մարդու մը չը ներշնչէր բնաւ այլ զգացում։ Բայց միայն սուրբ յարգանք։ Վերջապէս բնութիւնն ալ կարծես, մարդոց պէս, մայր եղող կնոջ գլխուն վրայ կը ձգէ պսակ մը, գեղեցկութեան եւ համեստութեան պսակը։ Ժամանակակից երեւելի գիտուն մը ցուցած է թէ այն կինն՝ որ իւր որովայնին մէջ չը կրէր մարդկային էակ մը՝ անկատար էակ կը համարուի, յաճախ իսկ ախտաւոր թուլութեան հարեալ։ Զը՝ բաւեր միայն որ կինը սիրուհի լինի, չը՝ բաւեր միայն որ կինը կողակից լինի, պէտք է որ նա մայր լինի։ Նման հոգւոյն որ կենաց փորձառութիւններէն անցնելէ վերջ կը հասնի իւր բոլոր զօրութեան, կանանց մարմինն ալ ծննդաբերութեան վաստակոց մէջ միայն կը գտնէ իւր զարգացման կարողութիւնը։ Դիւցունք անգամ, այդ դժուարին պաշտօնը, կը վերանորոգէ այն գործարաններն զորս ի սկզբան կը թուի թէ կը տկարացնէ։ Կուրծքին ծաւալը կ'ընդլայնի, ուսերը կը բացուին, զլուրը պարանոցին վըրայ աւելի ճկուն եւ հաստատուն վեր կը բարձրանայ։ Կինը վերջապէս իւր բազկաց մէջ մանուկ մ'ունենալով միայն մեր աչաց առջեւ կ'երեւի իբր կատարեալ արարած մը։ Երբ վասն թատերական ոգին իսկ երբէք նիւթ չէ առած մայրական անձնաւորութեան։ Թատրը ներկայացուցած է շնացող կիներ, թշնամի եղբայրներ, մայրասպան տղաներ։ Բայց սրգեսպան մայր մը, բանաստեղծական պատմութեան մէջ հատ մը միայն կը գտնուի, Կլէպատրա։ Մեր օրերն անգամ, յորս յամենայնի փորձ փորձուած է, մեր օրերն՝ յորս բացաւորութեանց

նկարագրութիւնն յաճախ փնտռուած է իբրեւ միջոց մը խայթիչ նորութեան, ո՛չ մի գըրիչ ջանացած է աղարտելու այդ նուիրական տիպարն, եւ Ալեքսէյեւի հռչակաւոր բանաստեղծը, մի և նոյն անձնաւորութեան¹⁾ մէջ միացնելով ազգայնորէն իւրը, հարստահարութիւնն, սպանութիւնը, շուայտութիւնը, կարծած է որ զայն մարդկային արարածի առաջնահին բարձրացնելու համար, կը բաւէր անոր սրտին մէջ ցանկելու մայրական սէրը, թէ այդ մայր անունը կարող էր լուալ Պորճիա անունն։ Այս աշխարհի մէջ մայրն է միայն Աստուածն առանց զինքն ուրացող ունենալու։

Հաւատալի է սակայն, Բոլոր այս ներդաշնակութեանց հակառակ, գիտութիւնն, հազարաւոր տարիներու միջոցին մինչեւ մեր դարը, մերժած է կնոջ ստեղծագործիչ տիրուղը։ Գիտունը ըսած են թէ՝ մայրը չ'է մայր։

Այս իրողութիւն, շահագրգիռ ո՞րքան կարեւոր, խորին քննութիւն մը կը պահանջէ։ Վասն զի կնոջ ազատութեան ամբողջ հարցը կը յանգի անդ իբր զատուոր ունենալով նոյն իսկ Աստուած։

Օր մը, արեւելից օրէնդրութեան հին յիշատակարաններն աչքէ կ'անցնէի, եւ հոն կը փնտռէի ինչ որ հայրական արուեստին կը պատկանի, երբ յանկարծ աչքերս ինկան պարբերութեան մը վրայ որ զարմացումէն դողացուց պիտի։ Այդ պարբերութիւնն ահաւասիկ։

Մայրը չը ծնիր, այլ կը կրէ²⁾։

Մայրը չը ծնիր։ Ինչ է հապա մայրն, ինչ է հապա աղայն։ Բետաղայ տողերուն դիմեցի գտնելու համար այդ առեղծոսածային հայհոյութեան միտքն, եւ կարդացի հետեւեալն։ «Երբ բնութեան յարմար եղանակին, լաւ պատրաստուած դաշտի մը մէջ հաւուն սերմեր ցանես, այդ սերմերը մի և նոյն տեսակ բոյսի մը կը փոխուին իսկոյն։ Հոգ չէ թէ օրիցի կամ կնճիթի հատեր լինին ցանածներդ, դաշտը բեզ պիտի հասուցանէ ինչ որ իրեն տուած լինիս, որովհետեւ ինքը բուսող բնութեան մէջ ոչինչ է, անոնց սննդեան միայն ձեռնտու կը լինի, եւ սերմն իւր աճման մէջ հողին սեպահակնութիւններէն եւ ո՛չ մի բան ի յայտ կը բերէ։ Նոյնպէս է եւ մարդկային էակաց ծննդեան համար։ Այլը սերմն է, կինն արտը։ Մայրը չ'որոշիր տղուն յատկութիւնն, ինչ որ ընդունեցաւ նա՝ զայն կուտայ, եւ աղայն կը ծնի միշտ օժտեալ զինքը ծնուցանող մարդուն հանգամանքներով։»

Այս գաղափարը, ոյց դէմ կը բողբէր ուղիղ դատողութիւնն, ինձ երեւցան ի սկզբան ա՛յնքան այլանդակ որ զայնս ի մի կողմ նետեցի արեւելից ցնորական առասպելներուն նման, եւ արդարացնելու համար հին աշխարհն այդպիսի վարդապետութեան մը, զիմեցի յոյն բնապատմներու իշխանին, Արիստոտէսի։ Ինչ գտնեմ այդ մեծ մարդուն գրուածոց մէջ. սա բառերն, Հայրն է միայն ստեղծիչ։

Միջին դարու մէջ ուղեցի փնտռել ճշմարտութիւնն, եւ սկսայ քննել աստուածաբանական գիտութիւնն որ այն ատեն բոլոր գիտութիւններն յինքն կը բովանդակէր։ Սուրբ Թովմաս, իւր Գիտութեան

կարգի գլխուն մէջ կ'ըսէ. «Հայրը պարտի աւելի սիրուիլ քան թէ մայրն, որովհետեւ ծննդագործութեան մէջ ներգործական ըսկընդամատնուած է նա, մինչ մայրը՝ կրաւորական։»

Կը հարցաքննէի յաջորդ դարերու գիտունները. գրեթէ ամենեքին կը կրկնէին Մանուի սա վարդապետութիւնն. «Որդեծնական կարողութիւնն այրական կարողութիւնն է։ Կենդանային բոլոր էակաց սերունդն՝ օրձական կարողութեան նշաններով որոշուած է։»

Վերջապէս, մեր օրերու անուանի բնապատմը, Հնդկական Մենդոցին վրայէն առնելով իրենց օրինակ եւ ի նա միանգամայն յենլով, նորա բաղդատութիւններն ու դատողութիւնները փոխ առնելով, աւելի հեռին գացած են եւ ըսած. «Եւ եղեւ նախաբոյս կաղնի մի. այդ նախաբոյս կաղնին, պտուղներով ծանրաբեռնեալ, կը պտուռնակէր յինքեան ո՛չ միայն կաղնիներն որոց ծնունդ տուած էր, հապա և ասոնցմէ սերած կաղնիներն եւ զայնս որք այս վերջնոց յաջորդեցին։ Ասպաղ կաղնիներու բոլոր ծնունդը՝ իրենց թաքուն զօրութեամբ, իրարու ագուցուած բողբոջներու ձեւին տակ, ամփոփուած են այն առաջին հաւատներուն մէջ, որոցմէ դուրս ելած են եւ շարունակեան ելնել նման տերեւոց զորս կը պարզեն հետզհետէ։ Այսպէս է եւ կենդանատիպն մարդկային ծննդեան։ Աղամ իւր մէջ կը կրէր ո՛չ միայն Կայէնն, Աբէլն եւ ասոնց քոյրերն, այլ՝ աշխարհիս սկզբնաւորութեանէն ի վեր ծնած մարդկային բոլոր էակներն, եւ զանոնք որք պիտի ծննին մինչ ցկործանումն նորին։ Գալով Եւայի, մարդկային ցեղի մշտնջենաւորման մէջ իւր միակ մասնակցութիւնը ճիշդ այն է ինչ որ է հողինն, որ կաղնիին պտուղներն ընդունած և սնուցած է։ Եւան դայեակն է։»

ԵՐՆԵՍԹ ԼԵԿՈՒՎԷ
Ազգայնական

(Շարունակել)

ՈՐԻՐ ԵՐԹԱՆ ՀՈԳԻՔ

Աւ Վսեմ. Գրեգոր Էֆէնտի Օտեան

Ո՛ւր երթան հոգիք, միթէ հո՞ն ուր չունչ Հողմոց թափառիկ երթայ անտրտունջ, Կամ հոն ուր անդարձ թաւալին ալիք, Միթէ հո՞ն երթան եւ մարդոց հոգիք։

Դու որ երկնային խորհրդոց մատեան Արդ բաց ընթեռնուս, ո՞վ ալնիւ Օտեան, Պատմէ՛ ինձ հոգւոյդ ուղեւորութիւն Երբ մարմին քո աստ փոխեցաւ յաճին։

Պատմէ՛ դէպի ո՛ւր սլացար, յո՞ր վայր, Յո՞ր աստղ ում այնքան հոգի քո անձկայր, Հոգիդ որ ցաւոց զտուելով բովէն Այն աստեղաց պէս էր փայլուն արդէն։

Դու ոչ խորշէիր ննջել մահու-բուն Զի ոչ վախճայիր զարթնուլ յետ մահուն. Պատմէ՛ թէ դո՛ւ ես, թէ լցան փափար Եւ կարօտ սրտիդ անեղր եւ անյադ։

Որ մետօք վըսեմ ճախրէիր մինչ յամբ, Բայց սիրտ քո լի էր մանկան զգացմամբ, Պատմէ՛ թէ ինչ վարձ ընդունին յերկին Որք անմիմունջ աստ հեծեն տառապին։

1) Լուբրեցիա Պորճիա. սլաւոնական տըրամ Վիթթօր Հիւկոյի։ (Մ. Թ.)

2) Օրէնք Մանուի. Գիրք Դ. տ. 28, 29։

ԻԳՏԻՐԵՆ ԵՐԵԿԱՆ

(ՈՒՆԵՍԱՆՈՐԻ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ)

Է.

Երեւանի ունի երեք հասարակաց պարտէզներ, զարդարուած զանազան անպըտուղ ծառներով, որոց մէջ կան նստարանք, լապտերներ, յորում կը դրօսնուն արքեպիսկոպոս թեմաթեոսի վարկած մինչ կէս գիշեր բարբառելով, կոտորուելով։ Ունի նաեւ վարչական ժողովատուն, հաշտարար դատարան, քաղաքավարչութիւն (պէշխիյէ), գաւառապետութիւն, օստիկանատուն, խաղաղարար վարչութիւն, բարձր հաշտարար դատարան, տպարան, հիւրանոց, քլիւպ, պանդոկ, գործարան, գրադաստաններ եւ բազմաթիւ կտուրներ։ Ունի նաեւ եւ մրգեղէն եւ այլ բաներ ծախելու հրապարակ մը, ուր կը վաճառուին դէզ դէզ բարդած տեղական բերքերէն խաղող, տանձ, խնձոր, ձմերուկ, սեխ, դուդմա, թուզ, նուռ, սերկեւիլ, սալոր, կեռաս, չամիչ՝ իրեն զանազան տեսակներով, գինի, օղի, ցորեն, գարի, բամբակ, կտաւատ, բըրինձ, կորկոտ, հաճար եւ արջու, գայլի, աղուէսի ու նապաստակի մորթեր։ Յաւալի է տեղւոյն հայոց մանկտեաց փոքրիկ հասակէն բազմաթիւ մեռելին, երիտասարդաց ընդ երկար ամուրի մնալու սովորութիւնն, օրիորդներէն լրջաբան ուսանողներն, հայոց ամեն տեղ ուսանողն խոստովանող սիրտով ինն եւ հայկական վերապէք առուտուր ընելով չը յարգէին։ Իսկ գովելի իրենց զգացումը, բարեկամութիւնն առ Տաճկաստանի հայո, հիւրասիրութիւնն եւ եկեղեցասիրութիւնը բազմատմամբ վաղարշապատացոց։

Ռուսահայոց երկվանկ բայերու ծայրը «միայն միաբանից ծայրն է», գերանուանց սեռականը «բա, որ», «բա եւ գործածելու սովորութիւնն արդէն հանրածանօթ է, աստիցմէ գատ ունին իրենց խօսակցութեանց մէջ պարսկական, թրքական, ռուսական եւ աղաւաղեալ հայկական շատ մը բառեր։ Ժողովուրդը են միջնահասակ, սեւ եւ կապոյտ աչեայ, հուժկու, զիւցազն եւ ծածկամիտ։

Կանայք տղեղ, թոքոյն եւ նիհար են, կը հագնին արականք ռուսածեւ եւ եւրոպական զգեստներ, զլուխին շաքար, իսկ պարսիկը պարսկածեւ, հայ կանայք չըջազգեստ բայց զլուխին պարզ կապուած եւ զմայրեւորով, կը գործածեն նաեւ կանայք ասորական, օսկեմանեակ, ճակատնոց, մատանի եւ փաշաճ։

Առ հասարակ տնտեսական տեսարան մը կը ներկայացնեն պարսիկ կանայք պտոյտի ելած ժամանակներն. երեսներն կը ծածկեն ծակ-ծակ ծածկոցով որ մարդ չը տեսնէ, առջեւներն ֆէրաճէն վեր կ'առնեն արտաքին վարտիքներն ցոյց տալու համար։ Հայ ժողովուրդը առ հասարակ եւրոպական սեղանի վրայ կը ճաշեն, կը խմեն պտուղական գինի եւ կ'ուտեն Երեւանի անուանի խորովածը, մէկ-երկու ավան անգամ մը տունն ետեւած չոր հացերով, երբեմն թրջածով։ Հանգիստ են կենօր, ուրախ են կենցաղավարութեամբ, բայց տրտում ճշնշումէն. գինուր պիտի առնուի ի մօտոյ, այս ալ հոգ չէ, եթէ հայութիւնը կ'անելու կամ կ'որոնցնելու վատութիւնը չ'ունենար նպատակ. ալ ինչ թուեմ, ծանօթ է Պալատիկոյ օրէնքը, չը կայ այն ազատութիւնն ինչ որ հայոց փախաբեկի է, եղածը դէպի խորխորատ կ'առաջնորդէ։

Օրինակելի է տեղացոց որմային վառարանի գործածութիւնն, որ ընդհանուր է Ռուսաստանի համար. այս վառարան որ պատերու մէջ կը շինուի մի անգամ վառելով մինչ չորս սենեակ կարելի է տաքցնել։ Անուանի են Երեւանի հայոց մէջ Գահրաման Աղա Մէլիքեանց Աղամալեանց եւ Վասիլ Գեղամեանց, առաջինն հարստութեամբ, ազգեցութեամբ եւ աղքատ ցեղութեամբ ո'չ միայն Երեւան, այլ եւ համայն Ռուսաստան, որոյ բոլոր վրայ վերջին Աղեքսանդր թագաւորին թագուհին էր, որ մեռաւ իբր չորս տարի առաջ։ Գահրաման Աղա այժմ Երեւանի նահանգական արքայութեան դատարանի խորհրդոյն նախագահն է, իսկ երկրորդն անուանի է առհասարակ աղքատութեամբ եւ Երեւանի քաղաքապետ ինքնուրոյն, որոյ հայրն ստացաւ Ռուս կառավարութենէն ցմահ 25 ռուբլի ամսական Գեղամեան նախարարութեան յաջորդը ինքնուրոյն։ Երեւանայ Առաջնորդարանն ունի սոսկ կրօնական ժողով մը, որոյ իրաւունքն Առաջնորդով մէկտեղ միայն հոգեւոր գործերու մէջ է։ Կուգայ ժողովրդեան 14 Աքթֆաշ, 110 Մշակ, 10 Նար-Դար եւ 16 Արարատ ամսաթերթ։

Երեւանի պաշտօնական լեզուն ռուսերէնն է, բայց կը գործածուի նաեւ հայերէն եւ պարսկական թրքերէն, զի ռուսերէն լաւ գիտցող հազուադիւրէն է։ Պարսկական թրքերէնն յոյժ տարբեր է օսմանց լեզուէն։

Երեւանի քաղաքամասն է նաեւ ի պաշտօնէ երեք վերստ հեռուն եղող Նորգ գիւղը, որ ունի 300 տուն գլուտ հայ բնակիչ եւ մի եկեղեցի Ս. Սիմոն անուամբ, որոյ ճակատագիրը կը կրէ 1863 թուականն եւ երկու վարժարան մին արական իսկ միւսն իգական։ Արական վարժարանը ծխական է, իսկ իգականը Դոդախիթ անուն բարեպաշտուէն ինն մը անմահ յիշատակ, որոյ կը տակով կը կառավարուին 100 սաներ հինգ ռուսաց հոգատարութեան տակ։ Նորգ կը շինուի ընտիր գինի, որոյ մինչ 7 տարեկանը կը գտնուի, եւ հոգեղէն պտուկներ, ուստի պաշտօնապէս կը յորջորջուի Նորգ գիւղը 250մէքէր գիւղ։ Սորա ըզվիկն է Աստուածածնայ վանքն, որոյ եկեղեցին ունի 45 ոտք երկայնութեամբ եւ 17 ոտք լայնութեամբ մեծութիւն, ուր վերափոխման Ս. Աստուածածնի տօնին ուխտի գացող բազմաթիւ երկսեւ հետիտան եւ ծիաւոր ուխտաւորաց հետ եւ ալ գացի ուխտի ու զիտեցի հայ կանանց բորիկ վանք երթալու ջերմեռանդական սովորութիւնը։

Բայց ամսոյն որ եկեղեցւոյն փոքրութիւնը, կլիմային տաքութիւնն եւ խոստումաբան լինի զանազան տեսակ հոտերն արգիլեցին զիս երկար աղօթելու անմահ պատարագին առջեւ, զոր կը մատուցանէր Աւագ երէց հայրը։

Ը.

Ամսոնային պայծառ օրերէն մին էր, առաւօտեան լուսնի լուսով ճանապարհ ինկայ Երեւանէն դէպի հարաւային ֆորեւեք խոր վերապ երթալու համար։ Ճանապարհը Նախըւան գնացող խճուղին է, երթեալով բազում են, ուստի չը կայ երկիւղ մը, մանաւանդ որ լին են չըջալիտ արտերը, այգիները, սեխաստանները մարդիկներով,

Պատմէ՛ թէ մեր կեանք՝ մի տղեղ երազ
Հանդերձեալ կենաց է յառաջալազ,
Եւ թէ հոն մնան մեղ հեշտ՝ անպղտոր
Երազներ անվերջ՝ միշտ չքնաղ, միշտ նոր։

Հոն արդարութեան վրիժուն ճառագայթ
Յոյց տայ այն խիղճեր զորոս տանջէ խայթ,
Իսկ քեզի նման հոգիք վեհ ու զգօն
Իրենց արժանեօք յաւատ փայլին հոն։

Վասիլոյ բարձանց՝ յանտառաց ստուեր
Ուր ոչ աշխարհի հասնին աղմկներ,
Առ ոտն իմ բացուած լայն ընդարձակ ծով,
Քեզ խորհուրդս ուղղեմ՝ վարակեալ մտքով։

Կարծես այս բարձրէն՝ քեզ աւելի մօտ
Կամիմ քո ձայնէդ առնուլ զիմ կարօտ...
Բայց ի խոր ակեաց ընկղմի արեւ
Եւ զանառ ծածկէ գիշեր թանձր ու սև։

Մեր հորիզոնէն այսպէս մեկնեցար,
Եւ երկրայութեան զիս պատեց խաւար...
Թէ քո հետ տանիս դու մահուն գաղտնիք,
Ո՛վ ինձ մեկնէ թէ ո՞ր երթան հոգիք...

Իբր ակեաց փրփուր, իբրեւ ծաղկանց բոյր
Միթէ կը ցուրնն, իբրեւ մեղմ համայր
Կամ երդ թուփերի կը մարին միթէ...
Հտպա ո՞ր երթան հոգիք...

Ո՛վ գիտէ։
Մ. ԱճԻՄԵԱՆ

Ա. Ռ. Ա. Կ

ԿՈՅՍ ՀԱՐՍՆՅՈՒ

Հարսնիքի օրն գրեթէ հասաւ,
Աբար Մկոն հարսնաւ եկաւ,
Որմէ խնդրեց կոյս հարսնցուն...
«Պարնդաւոցոս, զիս ի քո տուն
Դեռ չը տարած, ա՛հ տար հետ քեզ
Յ'երուսաղէմ, որ ըլլամ ես
Հաճի հարսնուկ։

Յետոյ վիրապ, էջմիածին,
Որ ըլլամ ես փառք կրկին
Հանում հարսնուկ։

Յետոյ սուլթան սուրբ Կարապետ
Որ ըլլամ ես երախտագէտ
Սուլթան հարսնուկ։

Յետոյ վարազ, անտի ի Սիւս
Որ ըլլամ ես ի փառս փեսիս
Խաթուն հարսնուկ։

Խօսքը կարեց պարնդաւոցուն...
«Եկել եմ ես, աղջիկս յիմ տուն,
Տանել զքեզ, դու ելեր ես
Ձիս հանելու իմ տընակէս...
Կեցիր բարով, չէն կեցիր չէն,
Ինձ հարս պէտք է, հա՛րս տնակէն,
Ոչ թէ աղջիկ
Հատաչըջիկ։

Ձեր լուսագեղ ես աչք պաշեմ,
Ձեր ոտներուն ես հող լիզեմ,
Ով իմ Հայոց կոյս աղջիկներ,
Տիարիկ արէք ի ձեր տեղեր,
Սրտով հոգով նայեցէք դուք
Ինձ հաճի, հանում հարսնուկ։

ՎԱՀԱՆ ՎՐԻ. ՊԱՐՏԻՋԱԿՅԻ

տմանը ցորեն կը հնձեն, ոմանք այդի կը պահեն եւ ոմանք ալ մրգեղէն կը ծախեն անցորդաց: Այսպէս անցնելով Նորա-գաւիթ, Շէն-գաւիթ, Ագհամալու, Թաղա-բէնտ, Արաշամալու, Զիգտամու հայ գիւղերը, հասանք Գալէրու գիւղա-քաղաքն, որ կը բաժնուի երկուքի՝ ներքին եւ վերին Գալէրու մականուամբ: Ներքին Գալէրու ունի Ս. Յովհաննէս անուամբ մի եկեղեցի, երկու քահանայ, երկու վարժա-րան, մին ծխական, իսկ միւսն մասնաւոր եւ 400 տուն բնակիչ, որոց 200 հայ են, իսկ մնացեալը պարսիկ: Վերին Գալէրու ունի Ս. Գէորգ անուամբ մի եկեղեցի իբր 50 տարուան շէնք երկու քահանայով եւ մի վարժարան որ կը յաճախեն 80 աշակերտ: Այս երկու միացեալ գիւղորէից մէջտեղ կայ ընդարձակ վաճառանոց մը, ուր կան կանոնաւոր հարիւր կրտսերներ, գինեւուն-ներ, հիւրանոցներ, սրճարաններ, դեղա-րան, սուրհանդակի պահականոց եւ հիւ-անդանոց: Հոս կը նստի վիճակին փոխ-նաչառիկը եւ քաղաքական բժիշկը. ապա շարունակելով մեր ուղին 28 վերստէն հա-սանք Իւվայ, խոշոր խոշոր կարաններ շի-նող հայ գիւղը:

Այս տեղ Նախքեանէ արքունական պո-ղոտան կը բաժնուի Խոր-Վիրապի ուղիէն, ուստի բռնելով իմ գիծը մէկ ժամէն հա-սայ Խոր-Վիրապ, որ նախնի Արաշատ քաղաքին բլրոյն ստորոտն է շինուած եւ Ս. Գրիգորի վանք ալ կը կոչուի: Արաշատ քաղաք ապա փոխադրուած է ի Դուին ե-րեք ժամու չափ հեռու քաղաքը, զոր շի-նեց Տրգատայ որդին Խորով: Խոր-Վիրապի առջեւն է Դարուրի լայնարձակ դաշտը, Վայոց ձորին (Դալարակետ) ալեւածան եւ ծաղկափթիթ լեռները, ձորերն եւ Ե-րասխայ օճապոյտ ու հեղասահ ընթաց-քը: Վիրապն ուր ձգուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի Տրգատէն 287 թուին եւ հոն մնաց ողջ 13 տարի, կը գտնուի մենաս-տանի հարաւային արեւմտեան անկիւնը: Սորա նախնի խորութիւնը կ'աւանդեն լի-նիլ իբր յիսուն կանգուն, բայց այժմեանն ունի հինգ գրկաչափ խորութիւն, 18 ոտք երկայնութիւն, նոյնչափ ալ լայնութիւն: Մտայ սորա մէջ իւր նեղ բերանէն հազիւ հազ մեղմուելով, վառեցի Ս. Լուսաւորչի ծննդավայրէն մաշուած աւանդական քարին վրայ մօմ մը եւ կարօտով համբու-րեցի, որն Ս. Լուսաւորչի բազմաշարքար հայրապետին ազօթքով օրհնուած ու ուո-գուած է: Ապա ընելով ազօթքս համբու-րեցի առանձին առանձին մէջի չորս քարա-խաչերն եւ դիտելով օծի եւ կարիծի ձե-ռաչէն բնակավայրերը, փայտեայ սանդու-խէն կրկին վեր բարձրացայ: Վիրապին մէջ երկու տեղ արձանադրութիւն կայ, բայց չը կարդացուիր, միայն տակ ՌՃԺ թիւ մը միայն կը կարդացուի:

Յետոյ մտանք Վիրապին հարաւային կող-մը գտնուած պառաւի փոքր կամ հորը քանի մը կերպ ծալուելով, զի ուղիղ էջ մը չ'ու-նի, որուն համար կ'աւանդեն լինիլ Լու-սաւորչի հաց տուող պառաւին մնացած տեղն: Հոս է Ներսէս Գ. Շինող Կաթողի-կոսի շիրիմն անտապանադիր: Սոյն փոսին յատակն ունի 8 ոտք լայնութիւն եւ 18 ոտք երկայնութիւն, իսկ խորութիւնը վեց կանգուն է: Թէ՛ Լուսաւորչի վիրապին եւ թէ՛ սորա վրայ մեծկակ քարաշէն ծածկոյթ մը շինուած է Ներսէս Գ. Շինող Կաթողի-սէն, որոյ հիւսիսային պատին դրսի դի-տանն եւ մէկ տողէ բաղկացեալ անըն-

թեռնի մի յիշատակարան կայ, ու կը կրէ ՌՃԺ թիւն, իսկ ըսկիւր սա արձանադի-րը. « Ս. Եսայ քարեխօս Վրացի Գրիգո-րին » թիւ ՌՃԺԶ: Սոյն պատին վրայ կայ նաեւ ՌՃԺ թուական մը, շէնքին ճակատն ալ հետեւեալն. « Ի թվին ՌՃԺԻ յա-ւուրս Յակովբ հայրապետին, Առաջնորդու-թեամբ Տ. Դաւիթ վարդապետին նորոգե-ցին զՍ. եկեղեցիքս Խօճա Շմէօն Աղուէցի եւ Խօճա Աթանոսի թիֆլիզցի, յիշեցք ի Գրիգորս Աստուած: Ասոնցմէ զառ կը տեսնուի պատին վրայ մի այլ արձանադի-րութիւն, որոյ « նորոգեց » բառն եւ ՌՃԺԶ թիւը միայն կը կարդացուի: Սոյն մենաս-տան Վիրապէն եւ Պառաւի փոսէն զառ ունի Ս. Աստուածածին անուն քարաշէն ե-կեղեցի մ'ալ, որոյ շինութիւնը կը վերա-դրեն Ներսէս Գ. Շինող Կաթողիկոսին: Ասոր սեղանի բեմին վրայ գրուած է « Ս. Եսայ քարեխօս Մկրտումին, Իմաշին, Մո-սէսին եւ իւր ծնողացն, թիւ ՌՃԺԵ », իսկ արեւելեան պատին դրսի դին խաչքարի մը տակ նուիրողին ու իւր որդւոց անունն ու ՌՃԺԻ թիւ մը: Սոյն արձանադրութեան տակ կայ Լուսաւորչի, Տրգատայ, սպա-սաւորաց, օծի եւ հրեշտակաց քանդակեալ պատկերները քարի մը վրայ յոյժ հետա-քրքրական. ուստի քան ծառի ծառաւոր սանդուղ մը գնել տալով դողդողալով ելայ եւ կարդացի իւր յիշատակարանն որ է մի կողմը լոյ, « Ս. Գրիգոր Լուսաւորչի » իսկ միւս կողմը « Տրգատ թագաւոր, Աշխէն եւ սպասաւոր Ս. վիրապի թողեալ, թիւ ՅԻԱ: Սոյն Ս. Աստուածածին եկեղեցւոյն հարաւային պատին վրայ կայ մի արեւնա-յին ժամացոյց: Վիրապի վանոց մէջ կայ Թաղէս առաքելոյն եւ այլ անյայտ սրբոց մասունքը: Վանքն ունի տարեկան հազար ուսուցի եկամուտ, նոյնչափ ալ ծախք. մի վանապետանոց պատշգամ, ինն հիւրասեն-եակ, ախոռ, տնտեստուն, արտեր, ջը-րամբար, պարտէզ եւ այլիններ: Վանքը ոչ ժողովրդէն պաղի առնելու սովորութիւն ունի եւ ոչ ալ Էջմիածնայ հոգաբար տալու: Կը կառավարուի իւր կալուածոց եւ ուս-տաւորաց հասոյթներով: Այստեղաց գը-խաւոր օրն է Զատիկի Նոր կիրակէն: Մե-նաստանը Պարսկաստանի ճանապարհի մօտ լինելուն, ուղեւորը ալ ի հարկին կը հան-դիպին հոս: Պարսկաստանին հեռաւո-րութիւնն է վանքս երեք ժամ գէպի հա-րաւ. ուստի մերթ ընդ մերթ արպատա-կութիւնը ալ կը լինին ձէլացիներէն: Սորա շրջակայ արտօրայք արգասաւոր եւ արդիւ-նաւոր են, միայն ջրերը քիչ. Երասխն ալ հողին մակերեւոյթէն ցած լինելուն չ'ըն-ծայեր այն օգուտը Դարուրի, որպէս կը տայ օգուտ Արաքսայ միւս դաշտամասե-րուն: Երասխայ ջուրն հոս միայն խմուելու կը ծառայէ, զի ուրիշ աղբիւր չ'ը կայ: Վա-նոցս տաան եւ վեցամեայ վանահայրն է Արժ. Պօղոս վարդապետ Մալխասեան Բա-գուանցի, որուն կ'օգնէ աբորեալն Տէր Ստեփանեան Արժ. Գրիգոր վարդապետ, որ պաշտօնի մականուամբ կը յորջորջուի ի ուսուսհայս եւ է մի գործօն եւ ճարտար եկեղեցական:

Սյս վանոցը ըսկէ է Օթեաց Խաչ ըստած մատուռն, որոյ համար կ'աւանդուի թէ Թաղէս եւ Բարթողիմէոս առաքելաց Գը-րիստոսի 55-60 թուին, եկած են հոս մի գիշեր օթեալանած եւ գնացած ժամանակ-նին մատուռին երեք խաչ քաշած են գըլ-խաղիւր քարին վրայ: Սյս նուիրական Ս. վայրը յետոյ գտնելով Քէնտէրեան տիրա-

ցու Վարդան, որ այժմ Երեւանայ Պօղոս Պետրոս եկեղեցին քահանայ է, շինած է իւր հօր վանահայրութեան ժամանակ վը-րայի մատուռն եւ վրան դրած հետեւեա-լը. « 1859 ամի 6 օտորիկ, շինեցաւ մատու-ռն աշխատութեամբ եւ ծախիւր Վարդա-նայ Քէնտէրեանցի Ալէքսանդրապօլցու »:

Խոր վիրապի վանքին մէջ տակաւին լի են վնասակար օճեր, կարիճներ եւ այլ վե-ռուններ ու սողուններ:

Վիրապայ վանոցը ըսկէ է նախնի Պարս-կական Ըջըղար գիւղի աւերակներն, որոյ համար կը պատմեն թէ Պարսից տիրապե-տութեան ժամանակ պարսիկ մը բերել է ոչխար գոմեր է Ս. Աստուածածին եկե-ղեցին, ուստի սորա երազը գալով մի օք կ'ազդարարէ ոչխարներու Ս. տեղէն բար-ձուիլը, եթէ ոչ մահ կ'ապառնայ. սա կը խոտանայ բայց չը վերցնեն, սակայն երբ տեսիլքն երկոյս կը կրկնուի, սպառնալիքէն երկնչելով կը վերցնէ ոչխարները կը տանի գիւղը եւ կ'անուանէ ըջըղ Գէր. այսինքն լուսոյ գիւղը ժամանակ յետոյ իբր 50 տա-րի առաջ, տեսնելով որ վանքին խոզերն ի-րենց տունը մտնելով կը պղծեն, կը բո-ղոքեն Ռուս կառավարութեան որ խոզերը բարձուի, սակայն տեսնելով որ Ռուս կա-ռավարութիւնն աննպատակ պատասխան մը կուտայ, յուսահատ կը ձգեն գիւղը քայքայ-եալ վիճակի մէջ եւ կը մեկնին այլուր:

Վիրապին արեւմտեան բամակն է ա-հեղակերպ Մասիսն: Սորա բարձրութիւնը կը նկատուի դաշտէն իբր երեք վերստ, իսկ Ուրիանոսի Բակերեւոյթէն քստ Բարրոտ զննիչին 16,524 Փուտ աւելի քան գժարիլ: Մասիսի ստորոտն է Ակոռի աւերակ գիւ-ղը, Ս. Յակովբ եկեղեցին եւ նոր Արկ-ու-նին զարդարուած ծառներով, պարտէզնե-րով հանգոյն դրախտի, իսկ ըսկիւր փոքր Մասիսը: Վիրապայ վանքն իբր 4 ժամ հեռու է Գեղամայ լեռն, որոյ վրայ է Այրի կամ Գեղարդայ հիւսէն վանքը, Տրգատայ սարաւոյթը, Հաւուց թոռը, իսկ արեւել-եան կողմը Սողոգայի, Վառապանու, Կո-թայ եւ Մաքինոցոց վանքերը:

ՆՈՐԱՅՐ

ՎԵՐՁ

ՀԱՍԱՐԱՅԻՆ ԳԵՆԵՑԻԿ ԽՕՍԵՐՈՒՆ

Ինչ հոգը ծոյլին, որ յաջող է իր բաղ-դը. եթէ լաֆ թափի երկինքէն, գդալ չ'ունենար ան:

Ուրախ եղիր. եթէ չ'ես կրնար, գո՛հ եղիր:

Առողջութիւն, անդրա՛մ, գրեթէ հիւ-ւանդութիւն է:

Սշխարհի մէջ ա՛յնչափ միայն կը սպրէ մարդ, որչափ սրինգ կ'ածէ իր բախտը:

Ան որ իր սրտի մէջ կը նայի, իր ցաւը կը տեսնէ հոն:

Նախանձը հարուստ ծուխեր կը փնտռէ, դատարկ մառաններու մէջ չը մտնէր ան:

Աւելի լաւ է մուրալ քան փոխ ընել: Մեծ խնդիրը կրնա՞նք է, որ բան մը ընէ կա՞նք:

Ապրի՛ւ կ'ուզես, խենթ ո՛ւր, ազատ գա՛լ տեր փնտռէ:

Երբ գիտնամ թէ ի՛նչով կը զրաղիս, կը հասկնամ թէ ի՛նչ կրնաս ըլլալ:

Ուր որ ըլլայ շահը, հոն կը սուղուի միտքը:

ՍԻՍԱԿ ԵՒ ՍՈՍՈՒՆ (10)

ԲՆՈՒԹԵԱՆ ՍՈՒԱԿՆԵՐ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՔԵՐ)

Լ.

Գրեթէ բառասուն օրերը կը բոլորին յորմէ հետէ լեռնարօտի բացօդեայ գեղեցիկ երկնից ներքեւ կ'ապրէին բնութեան այդ սիրասուն սոսակներն։ Երջանիկ էին այն օրերն ու բարեբախտ այդ էակները։ Բարէ՛, ով կրնայ լիովին նկարել շնաշխարհիկ այն պատկերը՝ զոր կը կազմէր այդ հրեշտակաւոր էակաց լեռնարօտի մէջ անցուցած կենաց օրերն։ ամեն վայրկեան կը բերէր իր հետ նոցա հիացման եւ ըզմայման գառ տեսարան։ Օր մը՝ Վարդափառի պահոց ուրբաթ երեկոյ՝ երբ ամեն ոք իր ցորեկուայ գրազու մներէ վերժ, լուսնի սիրաբոյր լուսոյ ցրլացման ներքեւ՝ նեղ՝ կիկ եւ խառն ի խառն կերտուած հիւզերի դրանց առջեւ՝ անխտիր աստիճանաւ նըստած կը խօսէին եւ կը խորհրդակցէին յաջորդ օրուան՝ ի Նարեկու Ս. Գրիգորի վանքը գնալիք ուխտաւորութեան կամ «Շարագիլի» մասին, ու ամեն վառ սրտերը խանդ եւ թուեղ առնելով կը տրոփէին անձկանօք առաւօտեան գեղաժպտաւորեգական ծածանջափայլ ծագման աւետարեր ժամուն փափաքով, ամեն բերնէն ցնծութեան եւ բերկրանաց ձայներ կը լսուէր ու ամեն մէկ դէմք սրտերի ներքին գգացման փայլով կը ժպտէր։ Սիսակն եւ Սոսուն դէմ յանդիման մէկմէկու նստած՝ խառն իրենց դրացեաց՝ ժպտներով ու ակնարկներով կը ծանօթանային իրարու ըզգացմանց ու կը թափանցէին մէկմէկու ներքին մտաց։ Անդ ին ուսանք պարբոնած, ուսանք բոլորածեւ նստած խաղալ եւ երգել էին սխտծ։ Նախագետական պարզութիւնն իր նախնական տիպարաւ կը փայլէր մեր այդ գեղջուկներէ հաւաքական տեսութեանց մէջ։ Յանկարծ հովիւ իւր հրացանի սարսափաւար պայթման հետ «հավարա» (օգնութիւն) կը պոռայ։ Այս ձայնն իր այլանդակ զորդմամբ այն բոլոր ուրախութիւնը կ'ընէ անհետ։

Ինչ կայ, կ'ըսէ Վարդ խաթուն, որ կը հակէր անգէն անքուն։

Աւազակներն են որ կ'ողեն յափշտակել մեր ոչխարները, կը պատասխանէ անդին Գեղեցիկն՝ որ կանգնած էր Վարդ խաթունին խիտ մօտիկ։

Ձայն տուէ՛ք հովուին, կ'ըսէ Սիսակ, թող հետազօտէ նոցա հետք, մինչ մենք կ'ապենք մեր գէնքն։ Այս ըսելով՝ նա կը բալկի պէս հիւզը կը մտնէ, պատէն կախուած արծաթափայլ շէշխանէն ու իր գործինքը վար կ'առնէ, հապճեպէն՝ զանոնք քառակուսի կը ձգէ ալ ու ձախ թեւէն՝ ու կայծակի արագութեամբ կը սլանայ գողերի ետեւէն։ Սիսակին կը հետեւին իրեն հասակակից չորս հինգ երիտասարդներ՝ որոնք կատարեցին այդ պարագային հզօր թիկնապահի գեր։

Ինչ կայ, Ալօ, ո՞վ էին ձեր վրայ արծա-կողք, ի՞նչ տարան, եւ զէպի ո՞ր։ . . .

Երեսունէ աւելի զինեալ եւ սպառազինեալ Ալկանցի քրդեր յափշտակեցին մեր հօտէն ամենէն ընտիրներն։ Երբ ձայն տուի ես, հինգ-վեց անձինք կ'ապեցին մեր ոտք

ու ձեռք, այնքան ծեծեցին զմեզ՝ որ նոյն խիլ չ'ենք կրնար նշմարել զմեզ։

Խօսելու ժամանակ չ'է, կ'ըսէ նորատի երիտասարդ Արամ։ մեր հացն ու ջուր թող լինի հարած՝ մինչեւ որ չը դառնանք յաղթանակաւ, եւ կը սլանան Սիսակ, Յարօն, Արամ, Կարօն, Մուրատ եւ Մանուկ վեց գինեալ կտրիճներ։ Սիսակն իւր ուղիւն թեափ կը գուշակէ նոցա հետք։ Ինքն իրեն վտրձառու եւ ռազմագէտ հրամանատար կ'առաջնորդէ իր արիասիրտ խմբակին։ Կը սահին երկու ժամեր՝ արծուի նման կ'ընթանան կ'անցնին ահաւոր ապառաժներ ու խիտ աւելի լեռներ։ վերջապէս հիւսիսէն Սինէգրի շղթայուող ապառաժուտ լեռան մը հարաւային դժոխային խորշերէն միոյն մէջը՝ իրենց աւարաւ մէկ տեղ կը նըշմարեն այդ հրոսակաց խումբն՝ որ իրենց յափշտակած հօտը մակաղելով՝ շուրջնակի նստած՝ ամենն ալ կազմ ու պատրաստ կը հսկեն երեւակայութեամբ անաստ։

Սիսակ կանգ կ'առնէ ու իր հետեւորդ քաջերին դառնալով այսպէս կ'ըսէ։

—Տղաքներ, ահա՛ գողերը՝ որպէս դիշաւիչ արծուի ճանկերի մէջ՝ այդ անսիրտների վառ ձեռքերին ենթակայ են մեր ոչխարը, եթէ մեզի մնանք, վրան պիտի բարդենք նաեւ մեր կեանքը։ Արեմն, իմ սիրելի ընկերք, մնացէ՛ք անվահերք։ Արամ դու եւ Յարօն մեր հանդիպակաց կողմէն, Մուրադ, դու եւ Մանուկ հարաւէն խիլ ես հիւսիսէն եւ Կարօն արեւելքէն պաշարենք անոնք։ Քարերը յարմար են ծառայելու հոս մեզ իբր պատնէշներ։ Հոգ չէ աւազակները հինգ անգամէն աւելի են քան զմեզ, սակայն քանի որ մենք իրաւունքի դրոշակի ներքեւ կուգանք կուռի մի այնպիսի բարբարոս հարստահարութեան դէմ՝ որոյ անարդարութեան ոչ քաղաքական օրէնք եւ ոչ բարոյական պատուէր կը ներեն։ Կը յուսամ որ չենք յաղթուիր։ Եղբայրներ, ինձ ծանօթ է՝ ձեր քաջութիւններն։ Երբ ես արձակման նշան ընեմ, այն ատեն թող որոտան ձեր հրացանները։

Սիսակի կարգադրութիւնը՝ ճարպիկ ռազմագէտի մ'ունէր նմանութիւն։ Այդ կարգադրութեան հետեւեցան ամենք, եւ ահա՛ ցոյց կուտայ Սիսակն յարձակման նըշանն։ . . .

Աւազակներն՝ որ իրենց շահատակութեանց մէջ կ'իսկոյն յաջողուող գազանի մը պէս՝ յոգնած եւ հանգարտ ընկողմնած դաւարուտ գետնի վրայ կը ննջին անըզգաստ, կը պաշարուն մեր քաջ երիտասարդներէն։

ԼԱ.

Սիսակի ու իր ընկերաց աշխուժութիւնն եւ սրտտուութիւնն՝ իրենց քաջութեանց հետ այն աստիճան յառաջ կը տանին զիրենք յաղթութեան մէջ՝ որ աւազակը կը շփոթին։ Սիսակի վերջին հարուած՝ շեշտակի կը կուրացնէ աւազակապետի հրեշային աջ ակը, սրով՝ յաղթութիւնը կը լինի կատարեալ։ գողերն երկու գերի եւ քանի մը վեհաբաններն աւարի բով թողնելով կը փախչին մեծ ահով։

Եւ այդ յաղթական խումբը՝ փառաց եւ յաղթութեան խրոխտ դիւցազնի մը պէս իւր առջեւէն ձգած առաջն եւ իր ետեւէն կապուած քաջելով գերէ աւազակները՝ դուրս կուգան այն լեռնային դժոխատեսիլ ձորանէջէն՝ զոր գիշերուայ վեցերորդ ժամու դալկահար լուսնոյ դեղնադոյն ճառագայթները՝ տխրատեսիլ իմն կը յօրինէին այն

Ո՞վ որ բան մը չ'ունի, բեռ չ'ունի, բայց հարստութեան բեռը ծանր չէ։

Նիթէ թուչուն որսալը չը յաջողուի ձեզի, բու, խօ՛ւնիք, վան խորվեցէք։

Սնգործ ես, անպէտ ես. ցեխի մէջ նետուած խիճը ալիք չը հաներ։

Ինչ օգուտ, որ գետը կը յորդէ օր մը, երբ արեւի մէջ տապկուեր է արդէն ձուկը։

Բախտի կողմնացոյցի սլաքը կայուն չէ, օր մը վեր կ'ենէ ան, օր մը վար կ'իջնէ, եւ օր մը մուրճ կ'ըլլայ մարդ, օր մը սալ։

Ձիու աշխատութիւն կ'ուզեն վարժապետէն, ու սարեկի կերակուր կուտան անոր։

Ո՞վ որ սատանի հետ ուտէ, երկար զըգալի պէտք ունի։

Լաւ խմելիքը կատուն ալ լեզու կը հանէ։ Թոյն ու մաւնութիւն մեղրի ձեռքերն են, այո՛, եւ ամօթէն պաշտպանուելու վահաններ։

Ճանչէ, զնառէ ամեն մէկը, ամեն բան. ճանաչում, զնատութիւնը կեանքի տուրեւառի ծանրաշափն է։

Ամեն ինչ բազմաբովան է, բանը զանոնք վերլուծել ու ձեւակազմելն է։

Մարդ կուռելով յաղթել կը սորվի։

Կե՛ր ինչպէս սովոր ես, հազիր ինչպէս սովորոյթ է։

Բարեկամիդ ետեւէն լաւ խօսէ, թըշնամոյդ ետեւէն լռէ։

Փորձառութիւն տգիտութեան հետեւութիւնն է, ու գիտութեան նախընթաց։

Տգիտութիւնը կարծիքներ կ'արտադրէ, ու սովորութիւնը վարդապետութեան կը վերածէ զանոնք։

Աշխարհը մեծ է, բայց ամեն տեղ ալ ճշգրտութիւնով լեցուած է։

Մէրը շատ բան կ'ընէ, բայց դրամը ամեն բան կ'ընէ։

Անընդհատ արտադրութիւնը միայն կըրնայ մնայուն ընել ամեն մի տեսակ հարստութիւնը։

Շահէ ինչ որ կարելի է շահիլ, տնտեսէ ինչ որ կը շահի։ աշխատութիւնն ու տնտեսութիւնն են այն փիլիսոփայաբարերն, որք ոսկիի կը փոխեն կապարը։

Քաղաքագիտութիւնը պարագայներուն յարմարելու, եւ ամեն բանէ, նոյնինքն անկէ՝ որ հաճելի չէ մեզի, օգուտ հանելու արհեստն է։

Պարագայները մեքենական կարողութիւններ են, պէտք է շահաւորել զանոնք։

Շփուով բնական է, պէտք է շփուիլ ու նեղուիլ. վարդը փուշի մէջն է, ոսկին աղբի, կեանքը տանջանքի։

Մեծ-մարդը ոչ գովեստի կը լսէ, ոչ պարսաւի. մարդուկը գովեստով կը մեղկանայ, պարսաւով կը վհատի։

Մարդոց յարաբերութիւններու ամոքումը բարեկամութիւնն է, տարամոքումը՝ թըշնամութիւն։

Անհատութեան մը բոլոր արժէքը ինքն է, իր եսը, այո՛, որի սակագինը ելեւէջի կորնթեք մը կը կազմէ. իր վերին զինը Ա է, ու ստորին գինը Օ։

Եստուներ կան, որք պնակ մը ապուրի հետ կը փոխեն իրենց ծին ու ծնունդը։

Մեր սրտի դարկը մեր կամաց-կամաց գերեզման երթալու, այսպէս ըսեմ, մեր յուզարկաւորութեան գանգահարութիւնն է։

Յ. Մ. ՏՈՒՏՈՒԹԵԱՆ

բարձրագույնը եւ յաղթանակ տալու օգնականները ձգտած սեւաստուներ չուրի հետ :

Երբ կը մեկնին այդ երիտասարդներ հիւղերէն, անոնց կը հետեւին խուսի մը ամառներ, որպէս Շուշանիկ եւ Կարինէներ : Դատ հետի չ'են մնար իրենց սիրելիներէն, որոց մէջ Սոսունն ալ իր աշխուժութեամբ եւ առնական կորովի սրտաւրդութեամբ՝ աստղի մը պէս կը փայլէր : Նա իր դաշար եւ սիրուն ձեռքի մէջ բռնած ունէր մի սուր, հագուած էր դուռնաբարիկ դիմաւորի մը պէս, կը խօսէր եւ կը խորհարէր զգայուն լեզուով մ'իր ընկերուհիներ : « Եթէ մարդ չը կրնանք սպանել նէ՝ գէթ միջոց մը կրնանք դառնցնել գանձը մեր քաղաքով՝ մինչեւ յաղթեն մեր քաջերն անխառնով : Այսպիսի խորհուրդ խօսքերով կը մղէր միշտ յառաջ Սոսուն իր հերոսականներն եւ այս եռանդեան հրով կ'այրէին անոնք Սանդխտայ սրտով : Եւ ահա դէմերնին կ'ենեւ իրենց տաքփալի քաջերն՝ որոց կ'առաջնորդէր Սիսակն անվեհեր : Առաջին անգամ չ'են ուղեր հաւատալ իրենց աչքի տեսութեան, բայց վերջապէս երբ չօգտփելի փաստերով աւարակոյսը կը վերնան, ով գիտէ թէ որպիսի զարմացման եւ սքանչացման առիթներ կ'ունենան :

Այս երկու խումբն՝ որոց միոյն կառավարող էր Սիսակ եւ միւսին Սոսուն, անկարելի է գրչով պատմել թէ՛ ինչ փափաքներով էին լեցուն, եւ այդ ազնիւ զգացմանց եռանդին ներքեւ ինչ կրակներ կը վառուէին :

Սիսակ միշտ յառաջ էր ամեն բանի մէջ, իր այդ ձգտումները սիրելի ըրած էին զինք շատերին : Այն ամենի լեռան վերայ գլխերուան ահուելի ժամու մը մէջ կը տեսնէ իր պաշտելի կոյսն՝ որ իր սրտին համապատասխան զգացումներով չ'է ժողոված անտարբեր մնալ իր ներքին թեւադրութեանց : Անվեհեր արտառութեամբ մ'իր կոյս ընկերուհիներին գլուխ անցած, մինչեւ հոն եկեր է՝ ուրկէ շատ հեռի չէ իրենց յաղթութեան վայրը, կը զարմանայ եւ իր խելքը կորսնցնելու դժբախտութեան պիտի դատապարտուէր՝ եթէ անմիջապէս Սոսունն իրեն մօտենալով նորա ձեռքէն չը բռնէր ու չը խօսէր նորա հետ հետեւեալ ոճով :

Աստուած ուժիկ տայ ձեզ, ո՛վ մեր գեղի ճրագներ, զօրանան ձեր դաշար թեւերըն որ պահապանէք միշտ զմեզ ու մեր խաչներ : Աստուած փայլէ, թէ որ քնիկ մ'էլ ուշ մնայիք մենք էլ ձեզ պիտի հասնէինք, բայց դճուութիւն Աստուծոյ որ դուք « Եւրաբի » էք, եւ մեր ոչխարներն էլ կ'երեւի որ Եւրաբի են : Այն, երանի թէ մենք ալ ձեզ հետ հոն լինէինք, ահ, որչափ սիրով պիտի կռուէինք, մենք երգում ըրինք, կամ ձեզ հետ մեռնիլ, կամ յաղթանակու մերազ տանալ : Զառ : շնորհակալ եմ Աստուծոյ որ մեր փափաքներին մեծագոյնն իրականացած կը տեսնենք : Հագար բարո՛վ դուք երեւեցաք, երանի՛ թէ մէկը լինէր հիմա աւետիք տանէր ի խղեր (հիւղեր) քանի՛ քանի սրտեր դարտէ պիտի փրկէր : Երթանք, շուտ երթանք, հոգիք, մեզ լալով կը նայեն մեր մարդիկ : Սոսուն քանի որ կը խօսէր այս զիւցազնական ոճով՝ իր սիրափայլ աչքերն ներքին յուզման իբր թարգման՝ կրակ կտրածի պէս, հուր կը ցայտէին : Գերեալ առաջակաց կողմը յածելով նշմարեց զանոնք, ու այն բորբոքման հուրը բռնկելով, Սիսակին թիկնապահ

Կարոյին կը դառնայ : « Ասոնք ո՞վքեր են, Կարո՛, խնդրեմ տսէք : »

Ազոնք այն անօրինաց ընկերներէն են, որոցմէ մի բանին ալ ձեզ մատաղ ըրինք : ասոնք ողջ պահեցինք որ տեսնէք դուք ու աղէկ մը հասկնաք որ գողերը շատ վատ մարդիկ են, երբէք վախճալու չ'է անոնցմէ, ընդհակառակն եթէ սրտով դէմ դնող մը եղնի անոնց, անոնք արդէն վախճն փայտ կը կտրին :

Սոսուն իր ընկերուհեաց դառնալով վառուած սրտով մը կ'ըսէ : « Կը տեսնէք իմ ազնիւ քոյրեր, ես որ ձեզ ճամբայի մէջ կ'ըսէի, թերեւս իմ խօսքերը ձեզ ծաղր կը թուէր՝ հիմա կը համոզուիք որ առաջուկներն ամենէն գէշ եւ վատ մարդիկ են : »

Ու կրակի պէս անոնցմէ միոյն կը մերձեւայ որ սեւաթուր եւ կոշտ ձեռքերը իր գլխայն պարսկական մետաքսեայ սեւ փոշիով ետեւէն կապուած՝ գէնքերն եւ վրայէն առնուած՝ հսկայ հրէշի մը նման կը քայլէր անձայն : Սոսունը նորա դիմաց կայնած կ'ըսէ քղերէն :

« Վայ մերէք մարդ (ո՛վ վատ մարդիկ) : եւ իր ձեռքի սուրը՝ որ կը փայլէր որպէս մոխրասկան հուր՝ բարձրացնելով նորա գլուխն երկու կիսադուլներին պիտի բաժնէր՝ եթէ Յարոն ետեւէն չը բռնէր զայն : Սոսուն նկատելով որ իր հարուածը կ'ապեցուցին, սուրը պատեան կը դնէ ու իր քնքու ձեռքերով մէկ բանի ապտակ կը խփէ այն դժօխողէմ առաջակի ածխազոյն այտերին՝ որոնք արեւու կիզիչ ազդեցութեան ներքեւ բնական գոյն կորսնցուցած եւ հրէշային երեւոյթը հագած էին : « Այս աղէկ փիւս » կ'ըսէ քղերէն (վատ գողեր) : Առաջակին իր խոսքու աչքերը Սոսունի եւ ընկերուհեաց վրայ դարձնելով իր սրտի մէջ ո՛վ գիտէ ինչե՛ր մտածեալ եւ թիկնապահ արջու նման կը տնտմար :

Ղ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

(Շարժանիկ)

ՔԱՂՈՒԱԾ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ

Հոկտ. 18-էն 30

ԱՐՏԱՔԻՆ

Վիլհէլմ Կայսը քիչ քիչ կը վերստանայ իւր ոյժ, բայց ամենամեծ զգուշութիւնը կը յանձնարարուին : Այժմ կ'ըսուի թէ Զարըն երկու օր Պերլին պիտի մնայ, եթէ Վիլհէլմ կայսեր առողջական վիճակը ներքէ : Մեծ-Գուքս Վալտերի, Զարին եղբայրն, որ Սերենեւիճէի մօտերն որով զբաղեալ է այժմ, մինչեւ Վիլհա պիտի երթայ դիմաւորելու զՆ. Վահագնաթիւն : Հերպերդ Պիլգրաք Կոմս, Ծրիտրիխսրուհէէ վերադառնալով, նոր տեսակցութիւն մ'ունեցաւ ռուս դեսպան Շուվալով Կոմսի հետ :

— Վիլհէլմայէ կը հեռագրուի առ թայմ թէ Ծրիտրիխսրու իշխանին պալատան վերադառնալ Սէն-Քրիստոֆ Կոմս Վիլհէլմայէ Բարիզ գացած է, կանոնադրապէս ճանչցնել տալու համար Պուլհարիոյ իշխանն, որ ցարդ չի կրնար ուղղակի յարաբերութիւններ ունենալ ի Սոֆիա բնակող դիւանագիտական գործակալաց հետ : Ծրանա ետ կանչած լինելով զիւր գործակալ, Սէն

Քրիստոֆ Կոմս պիտի ջանայ ի Բարիզ ֆերանսական նոր գործակալ մը անուանել տալ :

— Լոնտոնի լրագիրը հետեւեալ Ռիւդերեան հեռագիրը կը հրատարակեն Պէրլութէ նոյմբ. 1 թուով :

« Սուրիոյ կողմերը Փրանսական ազդեցութեան աճման ճիգերուն հետեւեալօք, Բ. Գուքս հրամայեց Լիբանանու կառավարիչ Վասա փաշային որ հսկէ այդ կողմեր Փրանսական գործունէութեան վրայ : Վասա փաշայի եւ Փրանսական գործակալին միջեւ յարաբերութիւնը ձգտեալ են, բայց Կայս. Կառավարութիւնը կը հաւանի Կառավարչին քաղաքականութեան : Լիբանանու Մարտի եկեղեցականը Փրանսասիրութիւն կը ցուցնեն : »

— Հայտնապատի Նիզամին օրինակին հետեւելով, Քարարթալայի Բաճան հինգ « լիճ » բուրի նուիրեց, (աւելի քան մէկ միլիոն Փրանք,) Հնդկաստանի սահմանաց պահպանողական վիճակի մէջ դրուելու գործին համար : Նաեւ, զիւր բանակ անգլոհնդիկ կեդրոնական Կառավարութեան տրամադրութեան ներքեւ դրաւ : Քարարթալա Բաճանայի ինքնօրէն փոքր պետութիւն մ'է :

— Ի Ռուսիա կարգուած նախարարական մասնախմբի մը տնօրինութեամբ, Պ. Բեդրովսքի, քարտուղար հանգուցեալ Կաթիկովի, վեց տարուց համար ստանձնեց Մոսկովէի Վեդոմոստի Տնօրէն-Խմբագրապետութիւնն :

— Ալլաա-Լուէնի Փոխարքայ Հօնլոէ իշխանն, հպատակելով ռուսական նոր օրէնքին, իւր օրդոնի համար ռուսական հպատակութիւն կը խնդրէ, որպէս զի նա կարենայ ժառանգել Ռուսիոյ մէջ Հօնլոէ իշխանի գերագոտանին ունեցած ընդարձակ կալուածները :

— Գահաժառանգ իշխաններուն առողջութիւնը նախանձելի չէ այս միջոցիս : Ռուսիոյ Գահաժառանգ իշխանին հիւանդոտ լինելն արդէն գիտեմք : Շարթուս հեռագիր մը ծանոց Գերմանիոյ Գահաժառանգին հիւանդութեան ծանրանալն, եւ վերջին Սուրհանդակաւ առնուած անգլ. լրագիրը կը ծանուցանեն թէ նոյմ. 2-ին Վալլէսի իշխանը ծանրապէս հիւանդացեր է :

— Բովանդակ Գերմանիոյ համար Գաղաքային նոր Օրէնք մը պատրաստեցաւ, որով Գերմանական միութեան գործն իրաւագիտական եւ օրինական տեսութեամբ ալ պիտի ամրողջանայ, որովհետեւ Գերմանիոյ այլ եւ այլ մասերը ցարդ քաղաքային տարբեր օրինօք կը վարէին :

— Որպէս Կաթիկովի ամեն կողմերն, նմանապէս եւ Պաքուի մէջ պաշտօնեայ եւ դրամատէր ռուսները կը ջանան ապարդէզէն բոլորովին հեռացնել հայ տարրն, հակառակ նոյն խիստ պետական օրինաց : Այսպէս Պաքուի մէջ գործանաւարաց մեծամասնութիւնն հայեր են, այն է 75 առ հարիւր, բնական հետեւութեամբ գործարանատարաց ժողովոյ 75 առ հարիւրն են : Կարիւրն եւս պարտէին հայ լինել. ռուս մամուլն եւ ռուս դրամատարը կը դժգոհին թէ ինչու Պաքուի գործարանատարաց ժողովոյ 75 առ հարիւրն հայեր են : Այն պարագայ ռուսական շահուց հակառակ համարելով Պաքուէն այլ եւ այլ նամակներ կը դրուին մայրաքաղաքի լրագրաց մէջ, առաջօրեակով կառավարութեան որ խուլի հայոց ձեռքէն գործունէութեան այս եւ այս օրինակ ազատութիւններն : Եւ արդէն ժամանակէ

միջոցներ ծան դժուարութեանց կը հանդի-
սին հայերը պետական եւ առեւտրական
այլ եւ այլ պաշտօնատանց մէջ: Կաւարտող
կառավարութիւնն ըստ որոշման բարձրա-
գոյն կառավարութեան՝ պիտի զեղչէ հայ
պաշտօնէից թիւն:

—Արեւելայէ կը հեռագրեն թէ Աւր-
արիական Պատուիրակութեան Երմտացոյցի
Յանձնարարին մէջ, Պ. Կոմս Քալիսթի,
խօսելով արտաքին կացութեան վրայ, ը-
սաւ թէ երբեք զանազանութիւնը պատե-
րազմի վտանգին առաջը կ'առնու: Կոմսն
հաստատեց թէ Անգլիա կը հաւանի եր-
բեակ դաշնակցութեան նպատակին:

Ն Ե Ր Ք Ի Ն

Բ. Դուռը տրամադիր է վաւերացնել
անգլո-Փրանսական պայմանագիրը Առէզի
կրանցին չեղծութեան վրայ, պայմանաւ
որ ինչ ինչ փոփոխութիւնք մտնուին՝ լաւա-
գոյնս ճշդելու համար Վեհ. Սուլթանի
գերիշխանական իրաւունքները:

Փրանսական դեսպան Մոնդէպէլլո Կոմ-
սը Բարիզէ վերադարձին, իր հետ բերաւ և
Բ. Դուռն յանձնեց այդ պայմանագրոյ պաշ-
տօնական պատճենն:

—Մայրաքաղաքիս աւստրիական դես-
պանատունը ձեռնարկներ ըրած է Բ. Դը-
րան մօտ, կարգադրութիւն մ'ընելու հա-
մար ի մասին Եւրոպայի հետ հաստատելի
թղթատարական նոր հաղորդակցութեան,
Սերպիոյ եւ Պուլիարիոյ ճամբով: Ըստ ո-
րում Փիլիպէէն ի Սոֆիա շինուած երկա-
թուղին բացուելուն պէս, Վառնայի Սուր-
հանգէլին տեղ այդ սուրհանգակը պիտի
ստատուի, աւստրիական կառավարու-
թիւնը փափաք յայտնած է որ Բ. Դուռն
արտօնութիւն չնորէ աւստրիական նամա-
կատան, գոց պայուսակներ զրկել եւ ըն-
դունիլ Բուլգարի երկաթուղիով: Սակայն չը
կարծուիր որ այս փափուկ խնդիրը կարե-
նայ դիւրաւ լուծուի մը ստանալ, վասն զի
օսմ. կառավարութիւնն իւր կայսերական
իրաւանց վրայ յենլով, այն կարծիքէն է
թէ միացեալ երկաթուղեաց միջոցաւ եւրո-
պական սուրհանգակն առաքելու եւ ըն-
դունելու իրաւունքը օսմ. թղթատարու-
թեան միայն կը պատկանի:

—Թուրք լրագրաց մէջ հրատարակեալ
պաշտօնական ազդ մը կը ծանուցանէ թէ
ըստ որոշման Նախարարաց Խորհրդոյ՝ բաւ-
ական իւղին ի Թուրքիա ներածուին արգիլ-
ուած է, ըստ որում այդ իւղ ձէթի եւ օ-
ճառի մէջ խառնուելով մեծապէս կը վնա-
ւէ հանրային առողջութեան: Առ այս թը-
ւականէս 61 օր պայմանաժամ որոշուած է,
յետ որոյ պիտի արգիլուի այդ իւղի ներա-
ծումն: Սակայն այդ պայմանաժամի մէջ
ըստ նախորդ որոշման նոյն իւղով խառն
ձէթերն եւ օճառները դարձեալ պիտի գը-
րաւուին եւ բերողներն ալ պիտի պատժը-
ւին ըստ օրինի:

Նախարարաց Խորհրդոյ սոյն որոշումն
հաղորդուած է մաքսային վերատեսչութե-
ան, Քաղաքապետութեան եւ բոլոր դա-
ւառաց:

—Վեհ. Սուլթանը Մալմուդէնի փաշա-
նի միջոցաւ տեղեկանալով Զօհրօս փաշայի
կատարած աշխատութեանց, բառէօրեան
դրութեան ի Կ. Պոլիս գործադրման հա-
մար, իւր ներկայութեան ընդունեց զնա և
անրամասն տեղեկութիւններ ստանալէ

յետոյ, հրամայեց որ կայս. բժշկական
վարժարանէն տասն աշակերտ ընտրէ եւ
իւր ձեռաց տակ վարժեցունէ բառէօր-
եան դրութեան, որպէս զի այդ երկուս-
տարդը յետոյ գաւառները զրկուին դար-
մանելու համար այն տարաբաղդ անձինքն
որք կը խաճնուին կատաղած շուներէ:

—Կարապետ էֆ. Չէչէեան, նախկին
գեր-անօրէն Բէթի վարչութեան ի Երզ-
կատ, Գարբերգի Բէթի ընդհ. տնօրէն
անուանած լինելով, իւր պաշտօնատեղին
ուղեւորեցաւ:

—Ներքին գործոց նախարարութիւնը
ծանոյց հարկ եղած տեղերը թէ այն արմը-
տիք որք տօնավաճառի մը մէջ գտնուելով
իւրաքանչիւր քիլոյի համար օրինական եր-
կու փարա տուրքը վճարուելէ յետոյ դար-
ձեալ նոյն տօնավաճառին մէջ ծախուին և
կամ այլուր փոխադրուին երկրորդ անգամ
տուրք վճարելէ ազատ պիտի մնան, սա-
կայն երբ գնուին այդ արմուքն ուրիշ տօ-
նավաճառ մը փոխադրելով վաճառէ զայնս,
յայնժամ երկրորդ անգամ օրինական տուր-
քը պիտի վճարէ:

—Սինուպէն կը գրեն թէ Բէթի տեղ-
ւոյն գործակալն 50,000 օսմա փախցուած
ծխախոտ գրաւեր է:

—Եօզղատի եւ շրջակայից մէջ սովի եր-
կիւղներ ծագած լինելով, բնակիչք կայս.
յանձնաժողովոյ զթուրքիւն հայցած են,
որ կը պտտաստուի նպաստ հասցունել:

—Անգլիացի դրամատեսաց նոր խումբ
մը ձեռնարկներ ըրած է կայս. կառավա-
րութեան մօտ, ափական երկաթուղեաց
շինութեան մենաշնորհը խնդրելու համար:

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք
Հայրն հրաժարեալ կը մնայ միշտ եւ ա-
ռանձնացեալ է յԵրուսաղէմատուն: Աւա-
սիկ այս մասին շարժուաւ մէջ տեղի ունե-
ցած եղելութիւնը:

Չորեքշաբթի օրը, բարձրագոյն հրամա-
նաւ, չորս երեւելի ազգայինք, յԵրուսա-
ղէմատուն երթալով, հրաժարեալ Ս. Պատ-
րիարք Հօր ներկայացան, եւ երկար խոր-
հրդակցութիւն մը ունեցան: Խնդրեցին որ
ետ առնու զիւր հրաժարական, եւ գոր-
ծոց գլուխն անցնելով, նպաստէ իւր հրա-
ժարման առիթ տուող խնդրոց կարգա-
դրման:

Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան պա-
տասխանեց՝ նախ՝ թէ իւր ծերութիւնն եւ
տկարութիւնն իրեն թոյլ չեն տար վերըս-
տանձնել Պատրիարքական պաշտօնին ծանր
եւ առաւել եւս ծանրացեալ պարտաւորու-
թիւններն:

Եւ յետոյ, Ն. Սրբազնութիւն, մանրա-
մանօրէն խօսելով իւր հրաժարման անմիջա-
կան պատճառներուն վրայ, յիշեցուց թէ
Օգոստ. Վեհապետին կողմէ իրեն տրուած
Հրովարտականքուն նուիրական տրամա-
գրութիւնը անտես կ'առնուին, որով եկե-
ղեցական կարգապահութիւնը կը վնասուի,
Հայոց ընտանեկան կապերը կը քայքային՝
Աւետարանի հակառակ նորանոր վարդա-
պետութեամբ, որք բնականապէս կը վի-
րաւորեն թէ՛ եկեղեցականութեան եւ թէ՛
համայն ժողովրդեան ամենէն նուիրական
զգացումներն և կը վտանգեն ամենէն կեն-
սական շահերն: Ասոնցմէ զատ, օրինաւո-
րապէս ընտրեալ Քաղաքական Ժողովոյ մը
վաւերացումը զլացուելով, ազգային գոր-

ծերն երեսի վրայ կը մնան, եւ անիշխա-
նական ցաւալի վիճակ մը յառաջ կ'ուզայ:
Ն. Սրբազնութիւն նաեւ ցաւ ի սիրտ յիշեց
թէ կարեւորութիւն տրուած է քանի մը
բախտալից իրենց տալօրէն զիմուսնե-
րուն, որք ապաքէն հակառակ են Սահմա-
նադրութեան բացորոշ տրամադրութեանց:

Ն. Ամենապատուութիւն խորին ցաւով
խօսելէ յետոյ այս եւ յարակից պարագա-
յից վրայ, եզրակացուց թէ Օգոստ. Վե-
հապետէն ստացած Հրովարտականքն իւր
վրայ պարտ կը դնեն հրաժարիլ: Ն. Կ. Վե-
հապետութիւն չ'ուզեր որ իւր շնորհած
արտօնութեանց հակառակ այսպիսի ան-
պատեհութիւնք տեղի ունենան, Ազգն եւ
Պատրիարքարանն անիշխանութեան մատ-
նուին, եկեղեցոյն բարեկարգութիւնը
խանգարի, եւ Քրիստոնէութեան հակա-
ռակ տրամադրութեանց մոլծմամբ, ա-
մուսնական եւ ընտանեկան կապեր քայքա-
յին եւ անբարոյականութիւն տիրէ իւր
քրիստոնեայ հպատակաց մէջ, որոց Կրօն-
քին և Առանձնաշնորհումներուն Պաշտպանն
է ինք:

—Կրօնական Ժողովն նոյն օրը յարտա-
սովոր նիստ գումարուելով, Ս. Պատրիարք
Հօր հրաժարարիւն եւ նմին կից յիշատա-
կագրոյն ընթերցումը լսելէ յետոյ, յայտա-
րարեց թէ կատարելապէս համամիտ եւ
համաձայն է անոնց, ըստ որում այդ խն-
դիրներ Ազգ. Վարչութեան խառն Ժողո-
վէն բղխած են:

Ժողովն յետոյ խմբովին Ամեն. Ս. Պատ-
րիարք Հօր ներկայանալով խորհրդակցու-
թիւն մ'ունեցաւ եւ վերադարձաւ ի Պատ-
րիարքարան ուր Մայր Դիւանին հետ երկար
խորհրդակցութիւններ եւ կարճեաց փո-
խանակութիւններ ընելէ յետոյ որոշեց այսօր
(ուրբաթ) վերստին յարտասովոր նիստ գու-
մարիլ Մայր Դիւանին հետ, որպէս ի հա-
մար թէ հարկ է Ազգ. Ժողով գումարել:

—Բարձր. Մեծ-Եպարքոսն ստանալով
Ամեն. Ս. Պատրիարք Հօր հրաժարականն և
նմին կից յիշատակագիրը, պաշտօնապէս
մանրամասն տեղեկութիւններ խնդրած է
Դատական նախարար Վսեմ. Ճիվաղ փա-
շայէն այն պատճառներուն վրայ որք տեղի
տուած են Ս. Պատրիարք Հօր հրաժարման:

—Ազգ. Երեսփոխանը հանրագիր մը կը
ստորագրեն յայտարարելու համար թէ Քա-
ղաքական Ժողովոյ ընտրութիւնը Սահմա-
նադրական է եւ թէ նորընտիր ժողովա-
կանաց վրայ լիովին վստահութիւն ունի Ե-
րեսփոխանութիւնը:

—Կըսուի — եւ ամենայն վերապահու-
թեամբ կը հաղորդենք — թէ Բարձր. Մեծ-
Եպարքոսն հեռագրաւ հրամայեց է Իզմիրի
Վսեմ. Կուսակալին որ Շահպաղլեաս վար-
դապետն ընդ ստիկանական հսկողութեամբ
Պոլիս բերուի:

Ըստ որոշման Կրօնական Ժողովոյ,
Պատր. Գեր. Փոխանորդ Հայրն հինգ-
շաբթի Բ. Դուռը գնաց և խնդրեց
Կրօնական գործոց Տեսուչ Զիվէր պէյէ
որ Կրօնական Ժողովոյ հաղորդուի Շահ-
պաղլեաս վարդապետի ջատագովու-
թեան համար Զմիւռնիոյ Ս. Առաջնոր-
դին կողմէ տեղւոյն կուսակալին և ան-
տի Դատական նախարարութեան ուղ-
ղեալ մէկ գիրն որոյ պարունակութեան
նկատմամբ, կը հաւաստեն թէ, Հայ
ազգին դարաւոր հաւատարմութեան
դէմ կասկածներ յարուցանելու հան-

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԵ ՅԱՆՁՆԱՐԱՐՆԵՐ ՀԵՏԵԻՍԱԼ, ՀՈՏԱԻՏ ՆԻԹԵՐԸ Eau de Cologne Impériale. Sapoceti, օճառ արդուզարդի համար. Ambrosial cream, օճառուտ գուլ՝ ածիլ- անոց մարդու համար. Crème de Fraises մորթի կակուղցնելու համար. Poudre de Cypria զովացնելու եւ ճերմկցնելու համար մորթի. Stilboideփայլ առնու համար մազերուն եւ մորու- քին. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը. Alcoolat de Cochlearia ակուայներու համար. Eau de Chypre արդուզարդի համար. Թաշկինակի հա- մար հոտաւէտ նիւթեր. Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Ma- rie Christine. Imperial Russe.

977

15-29

գամանքն ունի. Զիվէր պէյ, վսեմ. ձէվտէդ. փաշայի հրահանգն ստանալէ յետոյ, կուգայ եւ նախ դիտողութիւն կ'ընէ թէ ինչպէ՞ս կ'ընական ժողովն գոյութիւն կ'ունենայ եւ գումարում- ներ կ'ընէ երբ իւր նախագահն հրա- ժարեալ է եւ յետոյ կը յարէ թէ ան- պատեհ է խնդրուած գործն օրինակը տալ, քանի որ ի գիտութիւն կառա- վարութեան. հաղորդուած է եւ մանա- լանդ որ զայն խնդրողն կ'ընական ժո- ղովն է եւ ոչ Պատրիարք մը:

Գեր. Փոխանորդ Հայրը կը պատաս- խանէ թէ կ'ընական ժողովն, ըստ Սահմանադրութեան, կայս. կառավա- րութեան վաւերացեալ պաշտօնական մարմին մ'է եւ ունի իւր Ատենապետն ու կը գործէ մինչեւ որ լրանայ իւր օրի- նական շրջանն եւ ի պահանջել հարկին ուղղակի կը բանակցի կայս. կառավա- րութեան հետ, ինչպէս որ երբ Պատրի- արքական աթոռը (թափուր մնա) Պատ- րիարքի եւ Տեղապահի ընտրութեանց հրամանագիրը կուղղուի վարչական ժո- ղովոց, իսկ գալով այդ գործին, Ն. Գե- րապատուութիւն դիտել կուտայ թէ քանի որ Դատական նախարարութիւնն այդ գործին պարունակութեանն յեն- լով չի հաճիր Շահպաղեան վարդապետը Պատրիարքարան բերել տալ եւ քանի որ Ամեն. Ս. Պատրիարք Հօր հրաժարման պատճառներէն մին ալ այդ խնդիրն եղած է, կ'ընական ժողովն իւր պաշ- տօնին ընութեամբ իւր անքակտելի ի- րաւունքը կը նկատէ նոյն գիրը տես- նել, իսկ երբ կը զլացուի, կ'ընական ժողովն կը մնայ ըստ Եկեղեցւոյ եւ ըստ Սահմանադրութեան տնօրինել ինչ որ արժան է. Այս եւ ուրիշ գիտողու- թեանց առջեւ Զիվէր պէյ կը կրկնէ միշտ իւր ժխտողական պատասխանն:

Գեր. Փոխանորդ Հայրն այսօր կ'ը- նական ժողովին պիտի հաղորդէ իւր այս բանակցութեանց արդիւնքը:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ,

Գործադիր-Մ. Կոյուն Յանձնադիր

ՅՈՎԻՒՓԱՅ ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻՆ

Սահակ-Մեարտեան Գրական մրցանա- կարաշխութիւնն՝ զոր բարեխառակ Յով- սէփ Իզմիրեանց հաստատած է, պիտի կա- տարի յառաջիկայ 1888 տարւոյ Մրցոց Թարգմանչաց տօնի օրն: Հետեւապէս Գոր- ծադիր-Մնայուն Յանձնադիրը կը փու- թայ այսու Յայտարարութեամբ վերստին հրաւիրել այն հեղինակներն ու բանասէր- ներն որ ունին Ազգային Լեզուաքննութեան եւ Պատմութեան վերաբերեալ երկասիրու- թիւններ, ձեռագիր կամ տպագիր, եւ կը փափաքին մասնակցիլ մրցանակաբաշ- խութեան, փութան յուզարկել զայն առ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն, ի Կ Պոլիս, մինչեւ յառաջիկայ տարւոյ յուն- վարի սկիզբն:

Տպագիր երկասիրութիւնք հարկ է որ ետեւ օրինակ յուղարկուին:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մ. ԱՐԻԿԵԱՆ ԷԹԵՆՏԻ

ԼԵԴԱԹԻ ՍԱՐ

Տէլ. Բ. Մ. Ա.

Վաւերացեալ յԱմեն. Սրբադոյ

Արիկեան Էթենտիի սոյն գործն՝ որ այս անգամ գլխովին բարեփոխեալ է՝ իւր ըն- թերցանութեան գիրք միակն է իւր տե- սակին մէջ, քանի որ կը սլարունակէ տը- ղայոց համար խիստ հետաքրքրական վե- պեր եւ այլ զուարճալիք՝ կարի յստակ եւ

շիւրմբոնների լեզուաւ մը գրուած, եւ իւ- րաքանչիւր համարի ներքեւ գրուած տը- ղայոց անձանթ բառերն իրենց նշանա- կութեամբ հանգերձ. գին 60 փարայ:

Սոյն գրքի լիւզա գրովն ալ մամոյ տակ լինելով՝ երկու շաբաթէն պիտի աւարտի:

Վասն Սրտօնատեան Տնօրէն-Պատասխանատու Բ. ՏԱՄԱՏԵՈՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՒԵԼԻ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՅ



ՄԼՏԵՍ՝ Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ

ԵՒ ԼՈՒՐՎԵՐՆԵՐՈՅՄ ԵՒՐ. ՆՈՐՈԳԻՐ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORE.)

Շերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը եւ աճումը: Գլխու թեփը շուտ մը անկեղծ թէ կ'ընէ: Կը անուշ հոտ առատ է ու հեշտալի:

“Մէկ շիշը կը բաւէ:” Եւ փորձը ունեցան ամենքը որոնցմորագունած մազերը իրենց բնական գոյ- նին դարձան, եւ ճաղատ տեղերը մազով ծածկուեցան:

Կ'ընէ, եւ ամենեւին զիւն մը շինը: Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ եւ բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր պէ՛տէ Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ Համա- խորհրդանիշն իւր Նորոգիչը:

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORE.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կ'ընէ Եւրոպայի Բարիզ ու Նիւ Եորք: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղա- գործներու եւ անգղիացի գեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր Եղբայրք բրիտանական գեղարար, Ռերա, Մեծ փողոց. Կամբըտ. Բարուան. Անգլիական մթերանոց, Նիւ Եորք Գալալըրմ. եւ Խզի- տօր Լազանտէլա 455, Ռերա Մեծ փողոց:



ՀԵՐՄԵՆԵԿԸՆ ԾԵՂԱԿԵՓՈՒՆՔ

ԳԵՂԱՅԿԵՐՈՒՄՈՂ ՄԼՐՄՆՈՅ ԳՈՅՆԸ, ՄԻՇՏ


ԾԵՂԱԿԵՓՈՒԹ, ՄԻՇՏ ԹԵՐՄ:

Ընգամուած մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ եւ բազմաթիւ փոշի- ներէ: Եւ առջին անգամ գործածելովն ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ երեսը, վիզը, թեկը եւ ձեռունքերը պիտի առ- նուն անոյշ փափկութիւն մը եւ մարմարիտի փայլ, հանգերձ շուշանի եւ վարդի գունով եւ բուրմամբ: Սպանի գործիչ յատկութիւնները Կը վաճառուի Ն. եւ Ժ. Գանգիւր Եղբայրք բրիտանական գեղարար, Ռերա, Մեծ փողոց. Կամբըտ. Բարուան. Անգլիական մթերանոց, Նիւ Եորք Գալալըրմ. եւ Խզի- տօր Լազանտէլա 455, Ռերա Մեծ փողոց:

Կը հանդարտեցունէ: Ընհետ կ'ընէ մորթի սեւութը, երեսի եւ ձեռքի ցանկերը, արեւայ- րութիւն, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բժաւորութիւն: Եւ այս ամեն բանով անկարելի կ'ընէ մատուիլ թէ արհեստով գեղեցկացուած է:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կ'ընէ Եւրոպայի Բարիզ ու Նիւ Եորք: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անգղիացի գեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր Եղբայրք բրիտանական գեղարար, Ռերա, Մեծ փողոց. Կամբըտ. Բարուան. Անգլիական մթերանոց, Նիւ Եորք Գալալըրմ. եւ Խզի- տօր Լազանտէլա 455, Ռերա Մեծ փողոց:



ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ Ե ԳԵՂ ՄԱԶԵՐՈՒՆ

ՄԼԵՂՈՐ

ՄԼՐՔԵՐՈՒ ՄԼԵՂ ՀԵՏԻՆ ՆՈՐՈԳԻՐ

Եւրպայ իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ձերմը կամ գունաթափ մազերը. Կը դադրեցունէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ: Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ: Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southa lpton Row). Կ'ընէ Եւրոպայի Բարիզ ու Նիւ Եորք: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անգղիացի գեղագործներու քով: